Մրցույթ ՀՀ Արմավիրիր մարզի Առատաշենի համայանքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի / ծածկագիր 3.3-2/ թափուր պաշտոն զբաղեցնելու համար

04.06.2019թ.
Տիպ՝ Համայնքային ծառայության թափուր պաշտոն
<<Համայնքային ծառայության մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդված
Հայտատու՝ ՀՀ Արմավիրի մարզ Առատաշենի համայնքապետարան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Առատաշեն համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ պաշտոնի համար

1. ԱՌԱՏԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԳԵՏ

/ԾԱԾԿԱԳԻՐ 3.3-2/

ա) իր լիազորությունների սահմաններում նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր և այլ գրություններ,

բ) մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին, նախապատրաստում և աշխատակազմի քարտուղարին է ներկայացնում առաջարկություն զինապարտների վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև ըստ բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները տարածքային զինվորական կոմիսարիատ ներկայացնելու համար,

գ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ,

դ) ունի համակարգչով և ժամանակակից տեխնիկական այլ միջոցներով աշխատելու ունակություն,

ե) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-միջնակարգ կրթություն,

-սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի ,,բ,, ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն:

Դիմող ՀՀ քաղաքացիները Առատաշենի համայնքապետարան կամ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- դիմում մրցույթային հանձնաժողովին /ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս/
- տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման համար ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, վկայականի, աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակների հետ միասին
- արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենը իսկականի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 չափի
- Անձնագրի պատճենը

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը 2019թվականի հունիսի 19-ն է:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2019 թվականի հուլիսի 8-ին ժամը 12:00-ին Առատաշենի համայնքապետարանի շենքում:

Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Առատաշենի համայնքապետարան /գ. Առատաշեն Մաշտոցի 3/ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչություն / հասցեն ՝ք. Արմավիր, Աբովյան 71, հեռ. 0237-2-07-70, 0237-2-76-49 /:

Հասցե՝ ՀՀ Արմավիրի մարզ, գ. Առատաշեն, Մաշտոցի 3

Հեռ.՝ +374 93 08 11 28

ՀՀ տեղական ինքնակառավարման մարմիններ